

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ՍՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւրակի ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՍԵՐԻՎՍ

Տարեկան 2.60 Տոյա

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒՄ

Թանուցումն ուղղ
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉԱԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Գրութիւնք եւ լեկ
տրութիւնք

Rédaction : journal

Iravounk

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравункъ

ВАРНА

rev. Père G. Kalemkarian
Michelet
Vienne
tengasee № 4

Մեր յարգոյ բաժանորդ-
ներէն կը խնդրենք որ յիշեն
թէ իրենց բաժնեգիրները չեն
զրկած, և հաճին զրկել. մանա-
ւանդ անցեալ տարուէն պարտք
ունեցողները :

ՀԱՅ ԴԱՏԻՆ ԹՃԱՄԱՆԵՐԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Թրքական Սալնամէն աւելի
անխիղճ կերպով թուրքիոյ մէջ
հայոց թիւը նուազեցնող, այսին-
քըն 800,000 յիշից ցոյց տուող
յոգեւածագրին բոլոր սխալները
ուղղել հաշտ երկար պիտի ըլ-
լար. բայց չենք ալ կրնար բոլոր-
ովին լուռ անցնիլ քանի մը կե-
տերէ :

Բարիպեան թերթերու մէջ իբր
հայ գրող և ստորագրող պարոնը
որ ժամանակէ մը ի վեր ազգու-
թիւն և հայրենիք ուրացող ա-
նիշխանական բարոյականութիւն
մը եղած է, կը կարծէ գիտնալ թէ
հայերը հայկական նահանգներու
բարենորոգումները պահանջելով
տեղւոյն իսլամ տարրին վրայ գե-
րիշխանութիւն մը ունենալ
կուզեն : Բայց ընդհակառա-
կը, հայերս ինչքի, կեանքի ու
պատուոյ ապահովութիւն և ա-
ռանց կրօնական խտրութեան հա-
ւասարութիւն է որ կը պահան-
ջենք. հետեւաբար իսլամ տար-
րը մեզ դէմ գրգռուելու պատ-
ճառ չպիտի ունենայ, եթէ ինք
հայերը յաւիտեան պէս իրեն գե-
րի և իրաւաւորի ըստ պահելու
բաղձանքէն միայն չառաջնորդու-
նի :

Հայաստանը, Բիւրսը և Թուր-
քը լաւ ճանչցող, ասոնց կեանքը,
վարքը ու դատելակերպը ուսում-
նասիրող ամեն մարդ համոզուած
է, թէ Թուրքը և Բիւրսը, երբ
կը գտնուին Սուլթանի մը ուղ-
ղակի հովանաւորութեան տակ,
երբեք չեն համաձայնիր իրենց
Բիւրսոնեայ դրացիին հետ հա-
ւասար իրաւունքներով ապրելու
պայմանին. անոնք միշտ տիրող
ու իշխող, առնող ու չտուող, զար-
նող ու չը զարնող կուզեն մնալ,

որովհետեւ մարդարէին հաւա-
տացեալներն են և Սուլթան—
Խալիֆան իրենց վեհապետն է,
հետեւաբար կեաւորը պէտք է
իրենց գերին ու ստրուկը մնայ
Ահա այս է բոլոր Թուրքերուն
և Բիւրսոնեայ խորեակերպը,
ըլլան անոնք հին կամ նոր Թուրք
ուսեալ կամ տգէտ :

Այս տեսակ ժողովուրդի մը հետ
միթէ կարելի՞ է համաձայնու-
թեան գալ. միթէ կարելի՞ է
վստահիլ անոնց խօսքերուն ու
խոստումներուն, որոնք երբեք
յարգուած չեն Թուրք և Բիւրսո-
նեայերէն և ոչ ալ Թուրք կառա-
վարութեանէն. Ատկէ զատ, հա-
րիւրաւոր անգամներ փորձուած
և տեմնուած է թէ Թուրք կա-
ռավարութիւնը ու իսլամ տար-
րը ոչ թէ միայն չեն ուղեր այլ
և չեն կարող, առանց քրիստոնե-
այ ու քաղաքակրթ պետու-
թեան մը միջամտութեան, ճշդ-
մարիտ բարենորոգումներ գոր-
ծադրել. Որ երկիրները որ Բ.
Դրան իշխանութեան տակէն ա-
զատուած են այն ատեն միայն խաղա-
ղած և զարգացման ճամբուն մէջ
մտած են. երջանիկ եղած են :

Այժմ որ քաղաքակրթ Եւրո-
պայի ու Ամերիկայի բարձրագոյն
և մտաւորական շրջանակներուն
մէջ ընդհանրացած է խաղաղու-
թեան և զարգացման պաշտպան
կանգնելու իղձը ու պահանջը,
մեզ, Հայերուս համար շատ բնա-
կան է որ օգտուիլ ջանանք ան-
կէ, առանց կասեցնելու անշուշտ
ինքնապաշտպանութեան մեր
ճիգերը :

Կը կրկնենք անգամ մըն ալ,
թէ «Հայկական Դատ» ըսելով
պէտք է հասկնանք Ապառնովո-
րեան եւ Հաւաքարտըսեան պա-
հանջ Հայկական և անհանգանդու
հաւաք. Հետեւաբար իսլամ աշ-
խարհը բնաւ պատճառ չունի
Հայերը իսլամութեան թշնամի
նկատելու ու իր կապէ թշնա-
մութիւններ ընելու : Մեր պա-
հանջը մեր իսլամ դրացիներուն
համար ալ է, եթէ անոնք ըմ-
բռնեն մարդկօրէն ապրելու
գերազանցութիւնը :

ԱՐԳՈՍ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՈՉ

Կարծէ լրջօրէն ուշադրու-
թեան առնել այս պաշտօնական
կոչը որ բաւական յստակ կերպով
կը պարզէ ռուս կառավարու-
թեան և մասնաւորապէս բարձր
զինուորականութեան հայեցա-
կէտը և իրենց ինքնադարաց-
ման նկատումները Ռուսիոյ վեր-
ջին դէպքերու մասին, որոնք
տեղի ունեցան հոկտ 17 ի մանի-
ֆէսթէն յետոյ և որոնց բուն
պատճառը կը նկատուին յեղա-
փոխականներու և սոսիալիսթնե-
րու ծայրայեղ ձգտումները :

ՌՈՒՍ ԲԵՆԴԵՐԵԱՆ ԳՐԴԻ ԶԻՆԻՊԻՆԵՐԸ

Բենդերցիներ !

Առցիւղ-յեղափոխականները այսուս
դադարեցին աշխարհիկ խաղալ. իրենց
ծրագրներում—որ նրանք ցրում են
ամեն տեղ բոլոր միտինգներում—նը-
րանք յամառութեամբ պահանջում են
հանրապետութիւն : Դա նշանակում է՝
կորչի ցարը, Կորչի այն ցարը, որ հոկ-
տեմբերի 17 ին մանիֆէստով ժողովը-
ղին լիակատար ազատութիւն տուց,
որ յանձնեց ժողովրդին իր բոլոր իշ-
խանութիւնը : Այն ցարը, որ իրեն
վերապահեց ռճագործներին ներելու
և պետական դուռայի մշակած օրէնք-
ները հաստատելու իրաւունքը միայն : Ո՞
այդպիսի ցարին նրանք կամե-
նում են զահնկէց անել : Ինչ բա-
նի համար, որպէսզի իրենք յափը-
տակեն իշխանութիւնը :

Եւ ո՞վքեր են կանգնած սօցիալ-
յեղափոխականների գլխին : Այդ դուք
ինձանից աւելի լաւ գիտէք. բացի
մի քանի ուսանողից՝ այստեղ Բազ-
ում ամենից շատ աշխատում են
վրացիները, հայերը հրէաները...
Ու բոլոր այդ մարդիկ մի բան են
ուղղում.—օգտուելով Մայր-Ռուսաս-
տանի դժբաղին վիճակից՝ աշխատում
են առանձին թագաւորութիւն կազ-
մել : Արդէն այժմ իսկ Գուբարյուս
կազմակերպել է անկախ կառավա-
րութիւն... :

Յիշեցէք՝ թէ ինչ են գրում յե-
ղափոխականները իրենց բոլոր թոռ-
ցիկների, բոլոր լրագիրների ճակա-
տին—«Պրոլետարներ բոլոր երկրնե-
րի, միացէք»... Ինչ է նշանակում
զա. այն, որ նրանք հայրենիք չեն
ճանաչում, որ յանուն իրենց զօր-
ծի նրանք կամենում են Ռուսաս-
տանից նորանոր նահանգներ անջա-

տել : Սյուր կը բաժնի կովկասը, վա-
ղը լեհական-թագաւորութիւնը սպա-
նիական, որից յետոյ Աւստրիան
կը նուաճէ վոլիւն եւ Պոզոլի նա-
հանգները, Ռումինիան՝ ձեռք կառնէ
Բեսարաբիան, Եպոֆիան չի նշի ու
Չինաստանի հետ միասին կը սիրեն
Սիրիը, սպա հետգետէ կանջատին
Բուխարան, Խիվան... Ի՞նչ կը մնայ
մեր Մայր-Ռուսաստանից : Մտածելն
անգամ սարսափելի է...

Յիշեցէք թէ ինչ սոցիալիսթներն
են անում յեղափոխականները...
Սպանութիւններ յաջորդում են սպա-
նութիւններին... Կոտորում են ոչ
միայն կայսրի հաւատարիմ ծառանե-
րին, այլ և ամեն ինչ, որոնք պաշտ-
պան են կա՛մում, որպարութեան,
ով համարձակում է գրել նրանց դէմ՝
նրան հայածում են. բռնութեամբ
նրա են խուժում տպարանները և
սպանութեան սպառնալիքներով ար-
գելում են ընդդիմախօսական յոգե-
ւածներ տպել... Վերջապէ՛, դիմե-
ցին վերջին միջոցին : Սպանու-
ած ապարհով երկաթուղիներին, պոստ-
հեռագրատների գործադուլ կազմա-
կերպեցին... Դուք ինքներդ ամ-
բողջ ամիսներ մի տող անգամ, մի
կոպէկ անգամ չէք ստանում ու
հնարաւորութիւն չունէք ձեր մասին
լուր հաղորդել ձեր սիրելիներին...
Գործադուլների պատճառով դուք
ներքնակներ ու բարձրեաններ չունե-
ցաք, որովհետեւ սփերային վարչու-
թեան ուղարկած քաթանները թիֆ-
լիսից անկարելի եղաւ ստանալ...
Նայեցէք թէ ինչ են կատարում կա-
յարաններում... շաքաթներով մար-
դիկ նստում, սպասում են... Եւ
բախաները հիւանդանում, մեռնում են
քաղցից և ցրտից, իսկ չարագործները
ոչ մի ուշադրութիւն չեն դառնում...
Երկաթուղիները չեն աշխատում, ա-
մեն տեղ դադար. աղքատ մարդը հը-
նարաւորութիւն չունի ոչ մի տեղ
կոպէկ անգամ աշխատել, իսկ բոլոր
ապրանքների գները բարձրացել են
չափազանց : Տեղեր կան, ուր նախ
գրաւքան կարծէ 10 կոպէկ, իսկ
նրանք ամենուրեք աղաղակում են՝
թէ իրենք ժողովրդի հոգատարներն
են... անաւաթիկ ինչպիսի հոգատա-
րութիւն :

Բայց այդ գործադուլ անողները
ամենից շատ վնաս են հասցնում
կառավարութեան. երկաթուղիներից
պոստ—հեռագրատներից օգտուելու
անհնարաւորութեան պատճառաւ ան-
կարելի է նախապաշարատական կար-
գադրութիւններ անել պետական դու-
ռայի բացման համար... Յեղափո-
խականները նպատակն է պետական

գումարի բացումը արգելել, սրով հետեւ նրանք հանրապետութիւն են ուզում : Զը կարծէք թէ գործադուլ են անում բոլոր ծառայողները : Ոչ, ահագին մեծամասնութիւնը չէ կամենում գործադուլին մասնակցել, որովհետեւ կառավարութիւնը կատարել է նրանց խնդիրը, տրուում է աւելի ոռճիկ . . . գործադուլ են անում շատ քչերը եւ միւսներին ամուսնացնում արէք մեզ հետ միասին, այլապէս ձեզ կսպանենք» . . . Ահա-ւասիկ ինչպիսի միջոցներով են յեղափոխականները գործադուլներ յաջողեցնում . . . միայն թէ հասնեն իրենց նպատակին :

Իսկ կարգում էք արդեօք նրանց թուցիկները կամ նրանց լրագիրը՝ «Բագու» անունով : Ամէն ինչ սուտ է . . . Յիշեցէք, հոկտեմբերին դուք ձեր կրթով պաշտպանեցիք գծադր մարդկանց՝ գիշերները չը քնեցիք, չը կերաք. տանջեցիք . . . եւ ինչպիսի վարձաւորութիւն, եւ չըլաբերական-ների մէջ եւ իրենց «Բագու» լրագր-ըում ձեզ իբր գազաններ նկարագր-եցին . . . ասացին, որ դուք սպանում էիք անգլիներին, կողոպտում էիք, երեխաներին կրակն էիք նետում : . . . էլ ստորութիւն չմնաց, որ չը հնա-րէին ձեր մասին : Բոլոր սպաների ու իմ մասին գրեցին ամենազուե-լի զրպարտութիւններ . . . Այժմ դիտմամբ խելքից հանում են ձեզ՝ ստիպելով ամենամանրագործի պա-հաններ ներկայացնել : Զէ՞ որ այդ բոլորի համար դրամ է հարկաւոր, ո՞րտեղից գան են նրանք : Կը հաւաք-ւի պետական գումարն՝ ազատօրէն ընտ-րուած ազգից ու օրէնքներ կը մշա-կէ : Եւ ոչ ոք՝ բացի գումարից՝ չէ կարող այդպիսի լուրջ խնդիրներ վճարել . . .

Ու միթէ դուք կարծում էք, որ այդ հրէաները, հայերը, վրացիները, ռուս թերուսները եթէ իրենց ձեռքն ատեն իշխանութիւնը՝ ձեր բոլոր պահանջները կը կատարեն : Ոչ, նը-րանք կամենում են զօրքի մէջ խը-ռովութիւններ սերմնել միայն, որպէս-զի ձեր օգնութեամբ գահնկեց ա-նեն ցարին : Ու յարգման ժամանակ մէջ այնքան ատաղ զնացին դրանք, որ իրենց «Բանուորական պատգամաւոր-ները խորհրդի լուրեր» անունով ստոր լրագրում օգտուեցին ձեր սխալից, գեկու. 12-ի միտինգից, որի մէջ հէնց իրենք ամենախայտառակ միջոցներով մտցրին ձեզ . . . Նրանք ուղղակի դրում են, որ դուք նրանց հետ ձեռք ձեռքի տւած գնում էք կառավարու-թեան դէմ : Որպիսի՞ զգուշի սուտ, եւ ինչպէս են համարձակուում նրանք այդքան ստոր կերպով զրպարանել ձեզ, ազնիւ բնորոշները : ձեզ, որ հասկա-նում էք հրդուհի սրբութիւնը, ձեզ, որ պատրաստ էք ձեր կուրծքերով պաշտպանել կայսրին : Եւ ձեզ շատ լաւ չիմ ճանաչում ու չիմ հաւատում, որ ձեր մէջ թէկուզ մի հատիկ դաւա-ճան գանձի, չիմ հաւատում, որ ձե-ղանից թէկուզ մէկը դաւաճանի Գիօրգելի Գրոշակին, զրօշակ, որի տակից ի փառս կայսրի եւ Մայր-Ռուսաստանի անցել են այդքան յաղ-թանակներով ձեր պապին ու հայ բերը . . .

Եւ խորապէս համոզուած եմ, որ վճռական րոպէին ամբողջ զօրքը մի մարդու նման ոտքի կենէ ինձ հետ միասին՝ ընդդէմ բոլոր ապստամբնե-րի : Բաւական են սուտերը, բռնու-թիւնները, անկարգութիւնները : Միաբերան ազադակենք. «Կեցցէ մեր

ռուս Կայսր-Հայրը» ու վեր բար-ձրացնենք մեր ջերմ աղօթքները այն անձի անողջութեան համար, որ ժո-ղովորդին ազատութիւն տւեց : Թող Աստուած օգնէ նրան : ոյժ տայ մի-չեւ վերջ տանի իր Մեծ ողորմածու-թիւնները հոկտեմբեր 17-ի մանիֆէս-տով արտայայտուած . . .

Այս հրամանը զօրաբաժնի զլիսա-ւորները անձամբ պիտի կարգան բո-լոր գիւղերիցներին եւ զրոյցի ձեւով պիտի բացատրեն կարգացածը :

Բենդերիան գնդի հրամանատար (ԴՐՕՇԱԿ) ՏՕԼՄԱԶԵՎ

ՌՈՒՍԻՈՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՏՓՂԻՍ 7 մարտ
Զօրավար Կուրախովի սպան-նիչը մահուան դատապարտուե-ցաւ :

Հայ և թաթար ներկայացու-ցիչներու համաժողովը բացուե-ցաւ կառավարչին նախագահու-թեան տակ : Համաժողովը պի-տի զբաղի հայ և թաթար զինեալ խումբերու ընդհարման խնդրով : Պօրչալինսք գաւառին մէջ պա-տերազմական վիճակ հրատարա-կուեցաւ :

ԲԵՆԴԵՐԻԱՆ 6 մարտ

Այսօր հրատարակուեցաւ կայ-սերական այն մանիֆէստը որ կի-մացնէ թէ Տուման և Կայս. Խոր-հուրդը կազմելու համար օրէնս-դրական աշխատութիւնները լը-րացած են :

Տումային նաեւ Կայս. Խորհուր-դին՝ որ յետ այսորիկ պիտի կազ-մուի կայսրէն նշանակուած և ընտ-րուած անդամներէ, նստաշրջանը պիտի բացուի և հրաւիրուի իւ-րաքանչիւր տարի կայսերական Ուքադով : Տուման և Կայս. Խոր-հուրդը օրէնսդրական հաւասար իրաւունքներ ունին, նոյն իրա-ւունքը՝ օրինագծեր պատրաստե-լու և հարցապնդումներ ուղղե-լու նախարարաց : Ամեն օրէնք կայսերական վաւերացման են-թարկուելէ առաջ, պէտք է Տու-մայէն և Կայս. Խորհուրդէն քուէ-արկուին : Տուման և Կայս. Խորհուր-դը իրաւասութիւն ունի մերժելու իրենց անդամաց ընտրութիւնը :

Մանիֆէստը կը վերջանայ յայ-տարարելով թէ կայսրը կը յու-սայ թէ ժողովուրդի ներկայա-ցուցիչներուն օրէնսդրական գոր-ծերու մասնակցութիւնը պիտի ծառայէ կայսրութեան տնտեսա-կան բարօրութեան և պիտի ամ-րապնդէ Ռուսիոյ միութիւնը :

Այս մանիֆէստին հետ միատեղ հրատարակուեցաւ Ուքադ մը որ կը բովանդակէ Կայս. Խորհուր-դի և Տումայի կազմութեան մա-սին օրէնքներ : Կայս. Խորհուր-դին անդամները 9 տարուան հա-մար կընտրուին ամեն երեք տա-րին անգամ մը մէկ երրորդ մա-

սը կը վերանորոգուի : Իւրաքան-չիւր գաւառի Զէմսթվօի իւրա-քանչիւր ժողովը մէկ անգամ կընտրէ : Վեց անդամներ կըն-տրուին Սինօթէն և վեց Ակագէ-միայի և Համալսարաններու ներ-կայացուցիչներէն : 12 անդամներ՝ վաճառականական և արհեստա-գործական պոստաներէն : 18 ան-դամներ՝ աղւուականութեան ներ-կայացուցիչներէն և 6 անդամներ՝ Բոլոնիոյ կալուածատէրերէն, ու-րոնք պէտք է հաւաքուին Վար-չաւիայի մէջ :

Ակագէմիայի, վաճառականու-թեան և աղւուականութեան ներ-կայացուցիչները իրենց ներ-կայացուցիչները ընտրելու հա-մար պարտին Բեդերսպուրկ հա-ւաքուիլ : Զէմսթվօ չունեցող նա-հանքներու մէջ, կալուածատէր-ներու ներկայացուցիչներու ժո-ղովը տեղի պիտի ունենայ նա-հանքին գլխաւոր տեղը : Ընտրե-լիները պէտք է 40 տարին լրա-ցուցած ըլլան և պսակաւորի (պաշտի) վկայական ունենան : Նախագահը և փոխ-նախագահը կայսրէն կանուանուին : Խորհուր-դին անգամ ընտրուողները օրա-կան 25 րուպլի պիտի ստանան ամբողջ նստաշրջանի տեւողու-թեանը : Կայս. Խորհուրդին և Տումային նիստերը պիտի հրա-տարակուին : Վիճաբանութեանց փակումը պարզ մեծամասնու-թեան պահանջովով կըլլայ : Ոչ Կայս. Խորհուրդը և ոչ Տու-ման իրաւունք ունին պատգա-մաւորութիւններ կամ խնդրա-գրեր ընդունելու : Նախարարներ պիտի կրնան Տումայի անգամ ըլլալ և այդ պարագային իրա-ւունք պիտի ունենան քուէ տա-լու : Երկու հաստատութեանց ալ անդամները նստաշրջանի միջո-ցին տուրքի վճարումէ զերծ պի-տի ըլլան :

ՀԱՅԵՐԸ ԵՒ Մ. ՌՕԶՎԵԼԹ

Տօպրիչի ազգայինք ևս, փո-խանակ հեռագրի, որոշած են հանրադրութեամբ մը դիմել Մ. Ռուզվելթի : Ահա պատճէնը այդ հանրադրութեան,

Տէր Նախագահ
Ամերիկեան Մ. Նահանգաց Մեծ Հանրապետութեան,

Տօպրիչի եւ չըջակայ գիւղօրէից հազարէ աւելի հայերս, որոնց մեծա-մասնութիւնը թրքահայաստանի բոլոր գաւառներէն տարագրուածներ են, ներկայ հանրագրութեամբ կըլքիմեն Ձեր աշխարհաշակ աղաքաւորու-թեան : Խնդրելով որ բարեհաճիք ըս-տանձնել քաղաքակրթիչ աշխարհի առջեւ պաշտպանութիւնը ցեղի մը որ Արեւելքի մէջ քաղաքակրթու-թեան եւ լուսաւորութեան ուսմի-րան ըլլալու բարեմասնութիւննի-

րով օժտուած ըլլալով հանգերձ, են-թարկուած է անյուր հալածանքի թուրք կառավարութեան կողմէ, որ 300,000 հայեր խողխողել տալէ յետոյ, այսօր ալ կեղեքմանց այլազան ե-ղանակներով կը ջանայ բոլորովին բնաջնջել ամբողջ ժողովուրդ մը :

Տէր Նախագահ, ըսնոթեան տակ հեծող փոքր ժողովուրդներու ազատ-մանը համար Ձեր մարդասիրական զգացումները եւ վսեմ տրամադրու-թիւնները հաստատ յոյս կը ներ-շնչեն մեզ, ինչպէս նաեւ քաղաքա-կրթ աշխարհի. թէ ի գործ պիտի դնէք ձեր ջանքերը պաշտպանելու համար մեր ազգին մարդկային տար-րական իրաւունքները, որոնք քանիցս միջազգային դաշնացիներով երաշ-խաւորուած բայց ցարդ անգործադրելի մնացած են, զոգոհս աւելի դառնու-ցնելու համար մեր արդէն դառն կա-ցութիւնը :

Արդ, Տէր Նախագահ, Տօպրիչի եւ չըջակայք հասարակութիւնը համա-գումար ժողովով մը միաձայնութեամբ որոշեց թախանձագրն խնդրել Ձեռք որ մեր ազգային դատին՝ որ միան-գամայն արդարութեան ու քաղաքա-կրթութեան դատն է, գործնականա-պէս լուծելու նախաձեռնութիւնը ըս-տանձնէք, որով չորս միլիոն հայերս յաւիտենապէս Ձեզ երախտապարտ պիտի թողուք, եւ մարդկութեան ու քրիստոնէութեան որդանն եղող մեր հայրենիքը ներկայ դժոխային կա-ցութեան փրկած եւ զարգացման ու քաղաքակրթութեան ճամբուն մէջ ներմուծած պիտի ըլլաք :

ԱՂԵՔԱՆԴԵՐԻՈՅ ՄԻԹԻՆԿԸ

Աղէքսանդրիոյ ազգայինք Մի-թինկ մը գումարելով տեղւոյն Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյն մէջ փետր. 25 ին, հեռաւեալ հեռա-գիրը ուղղած են Ամերիկայի Մի-ացեալ Նահանգաց Նախագահ Մ. Ռուզվելթին :

Աղէքսանդրիոյ Հայերը ի միքինի գումարաւոր, միաձայնութեամբ կորոշեն խառնել իրենց ձայնը եւ-րոպացի հայաստեմեքոյ ձայնին, խնդրելու համար մեր ազգու մի-ջամտութիւնը, Թուրքիոյ վատար վարչապետին տակ հեծող Հայերուն ահալի վիճակին քարտաքմանը համար :

Պաշտօն յանձնուած է նաեւ Տ.Տ. Լեւոն Մկրտիչեանի, Տօք. Ժամկոչ-եանի և Լեւոն Լարենցի, որպէսզի ընկերակցութեամբ մէկ վարդա-պետի, պատգամաւորութիւն մը կազմելով, ներկայանան Աղէք-սանդրիոյ ամերիկեան հիւպա-տոսարանը և Մ. Ռուզվելթի ուղ-ղեալ հեռագրին պատճէնը հա-ղորդեն, միեւնոյն ժամանակ եւ-րոպական թերթերուն ալ տե-ղեկագրեն :

ՊՈՒՐԿԱԶԻ ՄԻԹԻՆԿԸ

Պուրկազէն մեզ հասած թղթակցու-թեան մը կը տեղեկանանք թէ կիրա-կի օր տեղւոյն հայ գաղթականու-թիւնը միթինկ մը գումարած եւ կարճ հեռագրով մը ուղղած է Մ. Ռուզվելթ-ին : Այս հեռագրին ծախքին համար պահակ մը պտըսցնելով 175 Քր. հա-ւաքած են :

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շար. Նախորդէն եւ վերջ)

Ուրիշ ծաղիկ մը դարձեալ կամա-
խի Բագաճի գիւղի բուրստանէն .
Յ. Կ. եւ Մ. Կ. Այս վերջինը Պրա-
յիլա տեսայ մեռնելու վիճակին հա-
սած. իսկ մեծ եղբայրը, տարին գէթ
մէկ հատ սերունի փոխելով գոհ կը
լինի թուրք Սուլթանին պէս : 14
տարին երէ ի վեր լքած հայր, մայր,
ընտանիք եւ զաւակ տուեր է ինքզինք
ցոփութեանց այս անբարոյականու-
թեանց մարմնացումը : Մի փողոցի
պոռնիկ իրր ի սրտէ սերտաւոր մը
կանոն եւ հետը կապիկ եւ երբ նա
իրեն ապուշութիւնը շահագործե-
լով լաւ մը կը փետտէ . այս լաւ
չէ ըսելով կառնէ ուրիշ մը, եւ ու-
րովհետեւ կեղծելու ձեւերուն մէջ
վարպետ են պոռնիկներ . կը շոյեն
նորա ամէն յոռի կրքերը, գեղեցիկ
ես , սիրուն ես, գործունեայ ես, խե-
լացի ես ըսելով, մինչեւ յետին լու-
ման կառնեն . այն ատեն միայն կը
զարթնու եւ կըսէ աս ալ չեղաւ հա-
ւատարմ մը գտնելու է . եւ կը գրա-
նայ անթիքայ մը հանքառներէն որ-
նոր կը գերազանցէ իր նախորդները
կողպտելու արհեստին մէջ . եւ իւր
այս ընթացքով բարեկամներէ կի-
մանամ որ, իմ Եւաչէն մեկնելէս վերջ
ունեցածը կուսերիս խեղճ ու կրակ
մնացեր է :

Ի Պ. որուն մէկ շահատակութիւնը,
հիւանդանոցին մէջ պատմած էինք .
այս կնամոյ ծերուկը եւ Յ. Կ. ի
աները փոխանակ մէկի երկու հոմա
նիներ կը բռնէ . բայց որ մը հայ-
րենիքէն կուգայ իւր չափահաս եւ
ազնիւ տղան . երբ կը տեսնայ իւր
հօր անվայել արարքը, կը խնդրէ որ
թողու այդ պոռնիկները եւ երթայ
հայրենիք ուսկից շատեց հեռա-
ցած է . հայրը կարեւորութիւն չի
տար . զաւակը կաթալիս «կաղնի ա-
ւետարան մը կարդալ» իւր այս վրան
եւ լաւ տփոց մը կը քայէ նոյն ան-
պատկառ ծերուկին , կրնան ալ վը-
ռնտելով : Սակայն ինչ օգուտ որ թուով
չափ քիչ են այս կորովը ունեցող
զաւակներ :

Չը սահմանափակենք մեր դիտողու-
թիւնները միայն կամաքներու վրայ
զաղթականութեանց մէջ ամէն քա-
ղաք եւ ամէն գիւղ իւր ցեղերը
եւ իւր ճակատ մուրերը ունի :

Ուրիշ նմոյշ ժալ չըջակայ գիւղե-
րէն եւ Բաղէի քաղաքէն . Ա. Վ.
եւ Ա. Մ. որոց երկուսն ալ մողած
իւրեանց հաւատարմ ընտանիքներ
անցած են Ռուսական եւ բաժանորդ
գրուելով երկաթուղւոյ ազատ եր-
թուեկութեանց նպարդէն եւ ջուր
կը վաճառեն ուղեւորներու , որով
առ օրեայ 10-15 ֆրանք կը չահին ,
սակայն ինչ օգուտ որ չահած զը-
րամիրն իրենց չը մնար որովհետեւ
ամէն կայարան մէկ մէկ հոմանի
ունին որոնք կը գանձեն կայարանէ
կայարան գոյացած արդիւնքը :

Խեղճ անվարներ , մինչեւ երբ
այսպէս ամէն օր հայրենի աշխար-
հէն եկած սրտառու շամակները կը
կը կարգաք, որք ամենէն կարծա-
ցեալ սրտերը ի գութ կը չարքեն
եւ ձեր օժանդակութիւնը կը հայ-
ցեն . դուք ամենայն սառնասրտու-
թեամբ կարեւորութիւն չէք տար եւ
անկ հացագին մը գէթ չէք զրկեր

ձեր կարօտովը տոջորուող եւ ձեր
անձկալի դարձին սպասող ձեր սրբ-
տահատորներուն . իսկ այս կեղտոտ
արարածներուն լիարուս կուտաք
եւ նոյն իսկ չէք զլանար կեան-
քերնիդ եթէ պահանջեն . ամօթ եւ
նախատինք ձեզի : Այսիս ինչ սպա-
սէ հայրենիք ձեզ նման տպերախտ
եւ անարժեք զաւակներէն :

Այսքերը կուրացած եւ երկու աչ-
քին լոյսին պէս իւր հոմանիս սի-
րող Մշոյ գիւղերէն մէկ անթիքայ
միւլ Ս. Հ. 10-12 տարիէ ի վեր օ-
տարութեան ելլող այս անտաշ պա-
րանը ունի այնպիսի սիրունի մը որ
իրմէ զատ սիրողին սիրտը կը խառնը-
վի . որ երբ զրոյց կը բացուի հայ-
րենիք երթալու մասին նա կըսիս
իւր գաւառաբարբառով ըսել :

— Դու լաւ Խոսէ իմ աչքի լուս
օր գիշեր ցորեկ չիմ կշտի հեռ նրա-
տեր . ինչ պիտոր ընեմ մէմլքէթ .
ինչ պիտ ընեմ կնիկ ու ճի . հերն
անթիքով եղնի չմեռնին . կուգա թուր-
քը առնէ գիմ կնիկ . կուգէ քուրդը .
հու հու խըլամէթին չի տեսիմ գիմ
խաթր խոչ է :

Այնեւս գնացէք այսպիսիներէ հա-
յութիւն եւ ազգային զգացում պա-
հանջեցէք եթէ կարելի է :

Գրեթէ այս վերջին տարւոյս մէջ
մեր հայրենակիցներէն ընտրեալ զա-
ւակաւոր մը որոց սրտին մէջ տակա-
ւին մեռած չէր հայրենաց սէրը եւ
գէպի նորա գիրկը դառնալու նուի
րական իղձը, անցան գնացին հայ-
րենիք թեթեւ հարցաքննութեան մը
ըովէն անցնելով Տրապիզոնի մէջ,
որոց նամակները ստացանք . որով կը
հաստատուի թէ գնալ փափաքողնե-
րու համար ճանապարհը միշտ բաց
է . կը բաւէ որ փախչիս օրինաւոր
լինի . (ազնիւ Զորեպանեանին), Մը-
չեցին, կա նեցին, վանցին կարելի է
մի քիչ աւելի չարչիկեն իսկ կամախ-
ցիներուս քնաւ : Սակայն այս է ցա-
ւալին որ մեր օտարամիտ հայրենա-
կից եղբայրները խտրի չկայ ըսելով
կը նետուին օտարներու սառած
գրկած մէջ . որուն յայտրդիւք ան-
դունդը չենք նշմարեր մեր կու-
րացեալ աչքերով : Զգուշութիւն անձ-
կալի իղբայրներ, զգուշութիւն, քաւ
է որչափ զոհ տուինք անխոհեմու-
թեան եւ անբարոյականութեան լի-
նինք ողջախոհ ինչպէս են հայրենի
աշխարհին մէջ մեր պաշտելի կրները
որոց երկնային սիրտին գէմ գաւա-
գրելը եւ ոխտաղբու զտնուիր .
արդար եւ մահացու մեղք է : Ո՛չ
ապաքէն անոնք ալ մեղ պէս մարդ
են . Օտարի հայրենիք միւր կեանք չը
տար օտարի կնոջ սէրը կեղծ է,
համարյոք թուաւոր եւ չունչը ապա-
կանուած . մեղք է ձեր երիտասարդու-
թեան . անոր յարգը գիտցէք :

ՅԱԿՈԲ ՆՇԱԼԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Գահիրէ 28 փետր. 1906

Վարդանանց Տօնին առթիւ տեղւոյս
Լսարան-Ընթերցատան մէջ երեկոյթ մը
սարքուած էր, եւ նոյն օրուան նախա-
գահ Ընտրուած էր Գեր. Տ. Եղնիկ Սըր-
բազան Ապահունի եւ օրուան բանա-
խօս Տիար Տօք. Տաղաւարեան : Հան-
դէսին ներկայ էին բազմաթիւ նշանա-
ւոր հայ անձնաւորութիւններ եւ մի
քանի օտարներ, որոնք ժամանակէն իսկ
առաջ փութացած էին հանդիսավայրը :

Սրբազան նախագահը որոշեալ ժա-
մունքի ընթացքով, նիւթ ունենալով օրո-
ւան տօնը եւ Լսարան-Ընթերցատան
պաշտօնը, Նորին Սրբազանութիւնը վար-
դանանց քաջագործութիւնը յիշատակե-
լէ վերջ , հարեւանցի կերպով նկարա-
գրից նաեւ իւր կրած տառապանքները
թիւրք բռնակալութեան ներքեւ . եւ
իւր գոհունակութիւնը յայտնեց որ այ-
ժմ իւր եղբայրներուն քով գտնու-
ելով, առթիւ կուսնենայ այսպիսի հոն-
դէսի ներկայ գտնուիլ . ապա ակնար-
կեց նաեւ Գահիրէի հայ վաճառական-
ները, եւ թելադրեց որ հայ լեզուին,
գրականութեան եւ պատմութեան նա-
խաձեռնողի ըլլան : (Բուռն ծափահա-
րութիւն) :

Սրբազանէն յետոյ բեմ բարձրացաւ
Պ. Ղեւոնդ Պահատեան, որ եռանդով
եւ ճարպիկ շարժուիւնով արտասա-
նեց «Սրամանթօ» Հայորդիներուն մէկ
կտորը, որն որ արժանացաւ ծափահա-
րութեան :

Ապա երեւեցաւ Տօք. Տաղաւարեան
որ հաղթականներէն ողջունեցաւ
երկար եւ որոշողութեամբ ծափահարու-
թեամբ : Յարգելի բանախօսին նիւթն
էր «Հայ ազգին պահպանման պայման-
ները» նախ համառօտիւ նկարագրեց
Վարդանի եւ իւր ընկերներուն կատա-
րած վեճած գործը, եւ ըսաւ թէ սոյն
մեծ տոնախմբութիւնը ոչ թէ միայն
հայ ազգի համար է, այլ միջազգային
տոն կը համարուի, որովհետեւ օտար
ները մինչեւ իսկ հիացած են անոնց
սրբագործութիւններուն վրայ, եւ ա-
նոնց մատուցած մեծ ծառայութեանը
գէպի ընդհանուր մարդկութիւն : Տօք-
թորը գծեց նաեւ նոյն ժամանակուան
Հայաստանի սահմանները ու հայոց
բարեկամները եւ թշնամիները , յիշա-
տակեց նաեւ հայոց մեծ թագաւոր-
ներու կատարած յաղթութիւններն
Յետոյ անցաւ հայ գրականութեան եւ
լեզուին եւ ցաւ յայտնեց որ մեր մէջ
չափ տղապիւններ չեն գործածեր իրենց
բուն մայրենի լեզուն եւ գեղարուեստ
կրթութեան ուրիշ օտար լեզուներ . մատ-
նանջեց նաեւ հայ լեզուին ճոխութիւ-
նը եւ իւր համար օտար ազգաց առ-
ջեւ . օրինակ տալով ըսաւ թէ , վեր-
ջերս նշանաւոր Անգղիացի գիտնէի մը
հետ երբ տեսնուեցայ . ինձ յայտնեց
իւր անսահման համակրանքը հայ լե-
զուին համար : Տաղաւարեան եւ պեր-
ճախօս Ատենաբանը երկարօրէն խօսե-
լէ վերջ իւր բանախօսութիւնը վերջա-
ցուց յորդորներով հայ ծնողները որ
չանք չը խնայեն իրենց զաւակներուն
ուսուցանելու հայ լեզուն, գրակա-
նութիւնը ու պատմութիւնը եւ ինչն
միշտ իրենց պարտականութիւնը հան-
դէպ իրենց ազգին :

Եւ ատենախօսը իր աթուր վերադար-
ձաւ ներկայից բուռն ծափահարու-
թեամբ եւ կեցցէներուով :

Գետոյ բանաստեղծ Վ. Շապուրեանը
վարժ տողանութեամբ արտասանեց իւր
հեղինակած «Գալին Արցունքը» ոտանա-
ւորը :

Լսարան-Ընթերցատան վարչութեան
Ատենադպիրը բեմ ելլելով նախ շնոր-
հակալութիւն յայտնեց նախագահ Սը-
րբազանին, Տօք. Տաղաւարեանին եւ միւս
պատոններուն :


Ապա առաջարկեց ներկայիս ընթաց-
ման վիճակը Միացեալ Նահանգաց նա-
խագահին Մ. Ռոզվելթին հեռագիր մը
գրելու Գահիրէի հայ վաճառական կող-
մէն : Այս առաջարկը կրկնեց նաեւ
Գեր. Եղնիկ Սրբազանը . Ռուստի միա-
ձայնութեամբ որոշուեցաւ հեռագրել
Մ. Ռոզվելթին որ Լահէյի վիճադող-
վին հաճի ներկայացնել Հայաստանի
գաղտը :

Չեմ մոռնար յիշել նաեւ տեղւոյս
«ԱՐԱՔՍ» Նուագախումբը, որ իր անած
ընտիր կտորներով ժողովուրդին վրայ
լաւ տպաւորութիւն թողուց :

Տ. Մ. Ա.

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ ԿՈՎԱԿԱՍԻ ԿՍՐՈՏԵԼՈՑ



Թէքուճ 20 փետր. 1906

Տէր Խմբագիր

Կը խնդրեմ որ հաճիք հրատարա-
կել ձեր պատ. թերթին մէջ հետեւեա-
լը . քաղաքիս փոքրաթիւ թէ գաղ-
թական եւ թէ տեղացի հայերէ , մեր
պարտականութեան զգացումէն, մղուած
հանգանակութիւն կատարեցինք , մեր
կովկասահայ կարօտեալ եղբայրներու
ի նպատ. եւ զոյացած գումարը ու-
ղարկեցինք նպատաստանոյց յանձնա-
խմբին ի թիֆլիս : Կը փութամ շնորհա-
կալութիւնս յայտնել ըստ այն անձնա-
ւորութիւններու որ իրենց լուծանքով
գիտեն քաջալերել թուով անհամեմատ
աւելի գաղանաբարոյ ցեղի մը դէմ կը-
ռիւ մղող մեր քաջերը : Այս առթիւ
կը խնդրուի, Տէր Խմբագիր որ իւրա-
քանչիւր նուիրատու անհաւաք անու-
նով մականունով ազնուութիւն ունե-
նաք հրատարակել, ոչ թէ ի պարհանս
այլ ի գիտութիւն նուիրատուաց եւ
կը կարծենք ա զու բարի օրինակ տալ
Ռուսմիտոյ հայաշատ քաղաքներու
եւս :

(ՅՈՒՑՈՎ ՆՈՒՐԱՏՈՒԱՑ)

Տիար Վարդերես Իպրայէիսն 15
ֆրանք . Տեարք Թ. Հայկաթեան եւ
Առաքել Կարապետեան 10 ական ֆր .
Տեարք Անդրէաս Փիսոսը, Մուշէղ Կա-
րապետեան, Յակոբ Կիրակոսեան 5 ա-
կան ֆր . Տեարք Գրիգոր Դասպարեան
եւ Գէորգ Յովաննէսեան 4 ական ֆր .
Տեարք Պետրոս Կիրակոսեան, Միքա-
յէլ Պաշինեան, Արթիւր Ավետիսեան,
Տօնիկ Գրիգորեան 3 ական ֆրանք .
Տեարք Յովաննէս Թովմասեան, Յարու-
թիւն Փոփովիչ, Ալեքսեյ Փոփովիչ ,
Գրիգոր Սարգիսեան, Յովաննէս Լա-
զարեան, Հաճի Յովաննէս, Ասֆատուր
Յակոբ, Տիկին Մաֆիչ, Նազար Փիլի-
պոսեան, Տօք. Հսոտայամպի, Գրիգոր
Պաշինեան, Մարտիրոս Յակոբ-
չա, Վարդան Արքաւամեան, Պոյոս Աս-
ֆատուր, Դաւիթ Ռամազան, Բարե-
պաշտ Հրեայ մը, Գրիգոր Մեսրոպեան,
Մկրտիչ Յովաննէսեան , Իրիստիայ
Եակոբ 1 ական ֆրանք . իսկ Տիար
Ախիթար Գրիգոր 1 ֆր. 50 անթիւ :

Արեւիկ զուարն է 102 ֆր. 50 անթ.

ՉՈՅՆ՝ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Այս մեծածաւալ շաշմաթերթը յե-
ղափոխական ջղուտ յորդաններ,
քննադատականներ եւ ազգային ու
քաղաքական լուրեր կը պարունակէ .
Արտասահմանի համար տարեկան
բաժնիքին է 12 ֆր. կանխիկ .
Հասցէն է՝

Արմենեան Բիւրոյի յիշիլ քօ .

Բ. Օ. Պօքս 1731, Պոսքըն, Մաս-
[Ամերիկա]

Կարելի է բաժանորդագրուել նաեւ
Խաւունքի խմբագրութեան միջոցաւ :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Մաքէթոնիանըն իւշվիւյթիւթ-
լէրի իշիւն էքսէրիյէթէն էվրո-
բալըլարտան միւթէշէթիւ մալի-
յէ գոմիսիոնը պիւտոնէի գարար-
լաշտըրմըշ տիր : Մէզքիւր իւշ
վիւյթիւթին ժանտարմա պիւտոնէ-
սի 28,815,293 ֆր : գարարլաշ-
տըրմըլըշ :

Պեղծիգա տէվլէթի եէնի պիր
նթա իլէ թորիսին Լա-Հէյ սուլհ
հէյէթիւնէ Եախոտ տիկէր պիր
հաքէմ մաշքէմէսինէ թէսլիմ օ-
լընմաւընը թալէպ իթտի ֆա-
գաթ թիւրքիա պու թէքիլիթէրի
գապուլ իթմէյնէնէ կէօրիւնի-
յոր : պու սէպէպլէ Պէլճիգա պու
մէսէլէտէն տօլայը պէօյիկ պիր
տէվլէթին միւտալէսիւնի էլտէ
իտէնէք :

—Թիւրք հիւքիւմէթի Բուսէ-
լի օրտուը իշիւն մուհիմաթ
էլպիսէ, սիւսն, աթլար վէ ըր-
մադլարտան կէշիւք իշիւն մու-
վադգաթ քէօքիւլէր աճէլէ թէ
տարիք իթմէք չարթը իլէ սը-
բարիշէր վէրմէքտէ վէ միւնա-
գասէյէ [նուադուրդ] գոյմագտա
տըր :

—Բուէթ մէսէլէսի թէքրար
ալէֆլէնիւթտէ տիր : Պատրա
քէօքիւլէրի թէշքիլ իտէն Բուէթ
սանճաղը Թիւրքիա քէնտի պիր
միսլըի ատտ իտէյոր : ինկիլթէ-
րա իսէ Բուէթի քէնտի շէյիւ-
նին հիւքիւ ալթընտա միւսթա-
գիլ պիր մէմալիք ատտ իտէյոր :
Հալպուքի Պալտատ չըմէնտըֆէ-
րի Բուէթտէն Պասրա քէօքիւ-
զինէ կիրէնէկիւնտէն, Ալմանիա
օ Եէրլէրին Թիւրքիա էլինտէ
օլմասընը արգու իտէյոր :

Իշպու մէսէլէսին հալլի իշիւն
թիւրքիատան մատտա պէլքի
Ալմանիանըն տալիս ինկիլթէրա
իլէ չարթընաճաղը մէմուլ օլընի-
յոր :

ՐՈՒՍԻԱ

Իշպու ալըն 21 ինտէ սուտուր
իտէն Չարըն եէնի ուքնը վէ
մանիֆէսթի Տոււա իլէ պէրա-
պէր պիրտէ պիր նէվ Մէնիսի
Այան (կայս. խորհուրդ) թէշքի-
լինի էմր ու միւսատէ իտէյոր :
Բէք չօք տէվլէթլէրտէ օլտըղի
կիպի Բուսիատա տալիս վաղի
գանուէն ռէլահիյէթիւնէ հայիզ
իքի մէնիւս պուլընաճագ, վէ
պու իքի մէնիւսլէրտէն գապուլ
օլընմայան հիշ պիր գանուէն իճ-
րայա գօնուլմայաճագ :

Հոկտեմբեր 17 տէ նէշր օլը-
նան Ուքադտան սօնրա, իթթի-
լալըլարըն վէվէլէսի խիւլաֆը-
նա օլարագ իլթէ շու եէնի ու-
քաղ Չարըն վէ վիթէնին Տոււա

թէէսիս իթմէք վէ Սահմանդը-
րութիւն թէմէլինի գոյմագ ի-
շիւն ֆիքըր ու էֆքեարլարը տօղ-
րու օլտըղը թաստիգ օլընտը :
սօն իքի ալտան պէրու հիւքիւ-
մէթին էլէ ալտըղը սըգը վէ շէ-
տիտ թէտպիլէր իսէ իլթիւ-
լըն էօնիւնիւ ալմագ վէ մէպու-
լար ինթիսապաթընը միւսթիւ
իթմէք մագստի իլէ օլտըղը ա-
շիքեար տըր : Տահա էվլէլ Մ.
Վիթէ միւլայիմանէ սուրէթտէ
Սօսիալիսթլէրի վէ իլթիւլալը-
լարը գանտըրմայա չալըշտը ի-
սէտէ, պուլար հիւքիւմէթէ
գարըն թէհտիլի պիր Թարզլէ
վէ ճուհուրիյէթ իլան ֆիթմէք
մագոնտի իլէ թաթիլի մէշպու-
լիյէթի ուսուսի իլանիւ ըսեան
պանտէրալարընը շէքտիլէր վէ
պիւթիւն մէմալիքի տէշէթ ու
մահվիյէթէ իլգա իթմէք իսթէ-
տիլէր : հիւքիւմէթ տալիս աու-
քէր գուվլէթի իլէ անլէրի գապթ
ու թէշքիւ իթմէկէ մէնպուր
օլտու :

Իշթէ պու սալէտէ շիմտի իս-
թիւլ թէշքիւն օլընմուշ օլտու,
Տոււա իշիւն մէպուտան ինթիսա-
պաթընա պաշլանըլիյոր : Հէր
հալտէպիր գաշայ զարֆընտա Տու-
մանըն վէ մէնիւսի Այանըն թէ-
նէմմիւսի իլէ իշլէր Եօլուէն կիր-
մէկէ պաշլայուպ Բուսիա տի-
կէր էվրոքա մէմալիքլէրի կիպի
սիւքիւնէթ վէ թէրադըլաթ Եօ-
լուէն կիրէր մէմուլ իտէ-
րիզ :

—Թիֆլիստէ հիւքիւմէթին խա-
ղինէ գացիէրի Եանընտ 7000
րուպլի պուլտըղը հալտէ, 3 քի-
շինին հիւքուլընա թէստիւֆլէ
գաթլ օլընմըշ : Գաթիլլէրտէն
իքիսի գաշար իքէն էօլտիւրիւ-
միշլէր : տիկէրի թուլթուլմուշ :

—Պէրլինտէն ալընան պիր
թէլէկրաֆա պինաէն, Մօսկուա-
տա աքէրլէքին մարտ ալընտա
ըսեանը պէքէնիլի իմիշ (?)

ԱՄՍՏՐԻԱ ՎԷ ՊՈԼԿԱՐԻԱ

Վիէննա 8 մարտ.— Բէտմի կա-
ղէթա նէզարէթին պիր էմիր-
նամէսինի նէշր իթտի պու է-
միրնամէ Պուկարիատան վէ Սեր-
պիատան կէլէն մալլէրէ մուվա-
գաթէն օլընաճագ մուամէլէյի
կէօսթէրիյոր : Պուկար մալլէրի
իշիւն տիկէր միլլէթլէրին էն
էնվան թարիֆէսի մուհիպ մուա-
մէլէ օլընաճագ : Բէգա Աւստրո-
Հունգարիա մալլէրի իշիւն Պուլ-
կարիատա տալիս ալըն թարիֆէ
իսթիմալ օլընաճագ :

Սերպիա մալլէրի իշիւն իսէ
մարտ 1 տէ մէվգըրի իճրայա գօ-
նուլան ուսուլ թարիֆէ մուհիպ
մուամէլէ օլընաճագ տըր :



ԱՆՃԷՋԻՐԱՍ ԳՕՆՖԵՐԱՆՈՐ

Իթիւլաֆ հասըլ իթմէք իշիւն
զիյատէսի իլէ զայրէթ տէվալ
իտէյոր իսէտէ, Ալմանիար թէ-
նէզըլիւլէ վէ Ֆիանսանըն խու-
սուսի մէնիւսաթընը թանըմայա
ասլա Եիւզ կէօսթէրմէյորլար :

ՅՐԱՆՍԱ

Վիւքէլա րէյիսի Մ. Բուլիէ
գապիւնէնին իսթիֆասընը եէնի
ճուհուրիյէթ րէյիսի Մ. Ֆալի-
էրէ վէրտի իսթիֆա գապուլ օ-
լընտը :

Գապիւնէ սօն մէնիւսինտէ՝ քի-
լիսէլէրին թահրիրի սէրվէթ մէ-
սէլէսինտէն տօլայը իսթիֆա վէ-
րիլիկիւնի պէլան իթտի : եէնի
գապիւնէ թէշքիլինէ գատար
քիլիսէ մէսէլէսինտէն մատա
տիկէր իշլէրէ պագաճագ տըր :

ՍԵՐՊԻԱ

Սըրպ վիւքէլա րէյիսի գապի-
նէնին իսթիֆասընը վէրտի :
Իշպու իսթիֆայա սէպէպ կէօս-
թէրիլիյոր Աւստրո-Հունգարիա
հիւքիւմէթինին չըգարպըղը միւշ
քիւլաթ վէ մուլալիֆ ֆըրգանըն
սըրպ վիւքէլասընը թէշքիւք իթ-
մէսի : Գրալ իսթիֆա գապուլ
իթտի վէ պիւթիւն ֆըրգալա-
րըն րէյիսլէրի իլէ կէօրիւշտիւ
իսէտէ եէնի գապիւնէ թէշքիլի-
նի էլան քիմսէյէ իհալէ իթմէ-
միշ տիր :

ՏԱԽԻԼԻԼ

Մէմալիքի էննէպիլէրտէն իս-
կէլէմիզէ կիրէն պաղը մալլէրին
միւքիլի սըհէթ վէ գարընըգ
օլտու օլմատըղընվէ տնլամագ ա-
նա կէօրէ կիրմէսինէ վէ գուլա-
նըլմասընա միւսատէ իթմէք ի-
շիւն շէհրիմիզտէ պիր թէհիլ-
հանէ (տարրալուծարան) թէէսիս
օլընտը :

—Շէհրիմիզտէն Թըրադայա
վի Այ-Եօրկի մանաթըրընա գա-
տար պիր թրամվայ թէէսիս իթ-
մէք թասալվուրը սէնէլէրտէն
պէրու վարտը իսէտէ, շու կիւն-
լէրտէ ֆիլիւթա պաշլանըլաճագ
ըմըշ : Պաղըլար տալիս շէհրի-
տէն Թըրադայա գատար օթօմօ-
պիլլէր իշլէթմէք թէտպիլիւնտէ
տիրէր :

—Պուկարիատան Մաճարիս-
տանա կիտէն պաղը մալլէր կէ-
շէնլէրտէ սինօրտան կէրի շէվի-
րիլմիշ իտի : Պուկար հիւքիւմէ-
թինին Վիէննայա միւրաճաթը
իւզէրինէ, տօլթանէ ճէվապ ա-
լընմըշ վէ Պուկարիա մալլէրի
իշիւն օ Եօլտա պիր էմիր վէրիւ-
մէտիկի պէյան օլընմըշ տըր :

ՊՈԼԿԱՐԻԱ ՎԷ ՄԸՍԸՐ

Իսմէն Սուլթանըն հաքիմիյէ-

թի ալթընտա՝ ֆագաթ ճիւսմէն
վէ ապլէն մուլաթարիյէթ վէ սէր-
պէսարիյէթի թամմէյէ հայիզ օ-
լան Պուկարիա վէ Մըրըր հիւ-
քիւմէթլէրի պէյնինտէ շու կիւն-
լէրտէ պիր թիճարէթ մուգալէ-
լանամէսի ագթ օլընտը : Իշպու
մուգալէլէ մուհիպ, իքի թա-
լաֆտան կէօնտէրիլէն մալլէրէ
էն խաֆիֆ կէօմրիկ թարիֆէ-
լէրինէ վէ գալիտէլէրինէ կէօրէ
թարաֆէյնտէն մուամէլէ օլը-
նաճագ տըր :

ԹԻԻՆՃՁՈՐԻՑԷ

ՎԱՌԱՆԱ ՓԵՏՐ 26
ՋԱԽԻՐԷ


ՊՈԼՆԱՅ			
Վալոն	54-60 լիպ.	9.80/	11. 20
Արապա	52-62 լիպ.	9.60	/11.60
ԱՐԱՍ			
Վալոն 100 քիլո		12.	/12. 40
Արապա	42-47 լիպ.	7.	/ 7.20
ԵՆՈՒԼԱՅ	արապա 33/36 լիպ.	5.	20/5.60
Վալոն 100 քիլո		12.	20/12. 85
ՖԱՍՈՒԼԵՆԱ	արապա 100 քիլո	22-	25
ՌԱԲԻՑԱ	100	հօգ	
Արապա	100 քիլո	հօգ	
ՏԱՐԸ	արապա	10.20/10.	60
ԳՕԼՕՁ	արապա 55-60 լիպ.	11.	/12
ՄԻՍԻՐ	57-58 լիպ.	արապա	8. /8.40
»	100 քիլո	11.	/11.20
ՋԱՎՏԱՐ	արապա	9.	/9. 60
»	100 քիլո	13.	/13.50
Կիւնտէ 40-50 վալոն	վէ 80-100		
արապա կէլմէքտէ	վալոն մուամէ-		
էսի նարօլէսին 20 ֆր.	արապա մու-		
ամէլէսի նարօլէսին	20. 20		
ՍԱՐԸԱՅԻՑԷ			
նարօլէսին	20, 20 ֆրանք		
Օսմ. լիւրար	22, 75 ալթուն ֆրանք		
ՊԼՊԱԼԻՑԷ			
Վարնա	ընդադրուտա	պագալիլէ	
մալլէրին պու կէլնի ֆիլաթը	ալթուն		
ֆրանք իլէ :			
ԳԱՂԷ		2.20/	2.30
Շէֆէր նէմէ			70
Շէֆէր քէսմէ	սանտըգ		36.50
Բիլիւն ձէնօվա չուվալը			42
»	Ֆիլիպէ		36
»	Ինկիլիզ		30.
Բիգօն	»		49.
ԿԱՁ Սանտըգ			12.50
Ձէթիլն Եաղը քիլո		1.-	1. 10
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ			25

ԸՆՏԻՐ ԲԱՑԱՍ

Ջուտ խաղողէ պատրաստուած բնա-
կան քաղախի նորահաստատ մեր մթե-
րանոցը առթ իւրնայէ յարգոյ հասա-
րակութեան որ ասկէ յետոյ գերծ մը-
նայ խաղախեալ այլ եւ այլ ղեղերով
պատրաստուած կեղծ քաղախներու վը-
նասնիւնն : Մեր քաղախին անարատու-
թիւնը եւ ազդուութիւնը ամեն կրաշ-
խիք կընծայէ իր առողջութեան նա-
խանձանդիւր յաճախողին, որ անգամ
իւ փորձելով արդէն հաստատած պիտի
ըլլայ գերազանցութիւնը :
Գուրտէն մեծաքանակ յանձնարարու-
թիւնք փութով կը գործադրուին ի
հարկին նմոյշ ղրկելով :

Հասցէ՝ ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍԱՊԵԱՆ

Դ. Թաղ փողոց Գօլոնի թիւ 65 ՎԱՌԱՆԱ



«ՕՐԻՈՒԹԱՐ» ԹԱՌԻԿԱԿԱՆ ՎԱՂԸ
կիրակի գիշեր փետր. 26, պիտի ներ-
կայացնէ :

«Յ Ա Ո Ի Ս» Ը

տրամ 4 արար
եւ ծիծաղաշարի գաւառ մը :
Տիւրքէն

Դ. ԹԱԿԱՐԵԱՆ

Одосовникъ А. Курбачевъ
печатаютъ в Д. Тодоровъ и С-но—Варна